«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՈՒԴԻՏՈՐՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ՊԱԼԱՏ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

17 մարտի, 2026թ. N 6 - Լ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՈՒԴԻՏՈՐՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ՊԱԼԱՏ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ Պալատ) Որակավորման հանձնաժողովի կանոնադրության 7.2 կետը՝ Պալատի խորհուրդը որոշում է՝

1. Հաստատել «Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպության Որակավորման հանձնաժողովի 2025 թվականի տարեկան գործունեության հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Պալատի պաշտոնական կայքում հրապարակման պահից:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ **ՄԱՆՎԵԼ ՂԱԶԱՐՅԱՆ**

Հավելված
«Հայաստանի աուդիտորների և փորձագետ
հաշվապահների պալատ»
հասարակական կազմակերպության խորհրդի
2026թ. մարտի 17-ի N 6 - Լ որոշման

«Հայաստանի աուդիտորների եվ փորձագետ հաշվապահների պալատ»
հասարակական կազմակերպության
Որակավորման հանձնաժողովի
2025թ. տարեկան գործունեության հաշվետվություն

«Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ Պալատ) Որակավորման հանձնաժողովը (այսուհետ՝ Որակավորման հանձնաժողով) ձևավորվել է Պալատի խորհրդի 2021թ. հունիսի 1-ի N 44-Ա որոշմամբ, այնուհետև կատարվել են որոշակի փոփոխություններ անհատական կազմում: 2025 թվականի հունվարի 1-ին հանձնաժողովի անհատական կազմը եղել է հետևյալը.

հ/հ	**Անուն Ազգանուն**	**ՀԳԳՀ**	**Կազմակերպություն**
1	Արթուր Հարությունյան (նախագահ)	2 20 0017	«Նեքսիա Արմենիա» ՓԲԸ
2	Մագի Նարգիզյան	3 20 0300	«Արեգակ» ՈՒՎԿ ՓԲԸ
3	Նարինե Մարգարյան	3 20 0130	«Էյ-Ի-Ջի-Սերվիս» ՍՊԸ
4	Անի Մոմճյան	2 20 0038	«ԹՄ Աուդիտ» ՓԲԸ
5	Արմեն Հակոբյան	3 20 0439	«ԱԿԲԱ Բանկ» ՓԲԸ
6	Ամալյա Գալստյան	2 20 0183	«Կոնրադ Ադենաուր» հիմնադրամ
7	Դավիթ Ազատյան	3 20 0345	«Կոնվերս բանկ» ՓԲԸ
8	Հռիփսիմե Վարդանյան	2 23 0775	«Վեբբ Ֆոնտեն Հոլդինգ» ՍՊԸ

Պալատի խորհրդի 2025թ. հունիսի 13-ի N 39-Ա որոշմամբ հաստատվել է հանձնաժողովի նոր անհատական կազմը, որի համաձայն Դավիթ Ազատյանին փոխարինել է Լիա Հովհաննիսյանը (ՀԳԳՀ՝ 3 23 0771, «Կոնվերս բանկ» ՓԲԸ), ինչպես նաև հանձնաժողովը համալրվել է մեկ նոր անդամով՝ Նելլի Ավետիսյան (ՀԳԳՀ՝ 3 23 0846, ՀՀ կենտրոնական բանկ):

Որակավորման հանձնաժողովի 2025թ. գործունեության ծրագիրը (այսուհետ՝ Գործունեության ծրագիր) կազմվել է ի կատարումն Որակավորման հանձնաժողովի Կանոնադրության 7.1 կետի՝ նպատակ ունենալով ապահովել հանձնաժողովի գործառույթների արդյունավետ իրականացումը և Պալատի խորհրդի կողմից Որակավորման հանձնաժողովի գործունեության նկատմամբ արդյունավետ հսկողության իրականացումը: Գործունեության ծրագիր հաստատվել է Պալատի խորհրդի 2024թ. դեկտեմբերի 16-ի N 33- Լ որոշմամբ:

Սույն հաշվետվությունը պատրաստվել է ի կատարումն Որակավորման հանձնաժողովի Կանոնադրության 7.2 կետի:

Որակավորման հանձնաժողովը 2025թ. ընթացքում գումարել է թվով 23 նիստ, որոնց ընդհանուր տևողությունը կազմել է 38 ժամ 20 րոպե:

29 հունվարի 2025թ.	N 1	• 5 ազատման հայտ, բավարարվել է 5՝ 16 քննություն • 2 որակավորման հայտ, 2 բավարարվել են • 8 ՇՄՋ միջոցառման ճանաչման հայտ, բավարարվել է 8
13 փետրվարի 2025թ.	N 2	• Պալատի 2025թ. հունվար ամսվա քննաշրջանի «Կառավարչական հաշվառում» և «Իրավագիտության հիմունքներ և կորպորատիվ իրավունք» առարկաների որակավորման քննությունների արդյունքների հաստատում
20 փետրվարի 2025թ	N 3	• Պալատի 2025թ. հունվար ամսվա քննաշրջանի «Ֆինանսական հաշվառման հիմունքներ», «ՀՀ հարկային օրենսդրություն», «Ֆինանսական կառավարում», «Ֆինանսական հաշվետվությունների պատրաստում» և «Աուդիտ և հավաստիացում» առարկաների որակավորման քննությունների արդյունքների հաստատում
04 մարտի 2025	N 4	• 3 ազատման հայտ, բավարարվել են 3՝ 9 քննություն • 6 որակավորման հայտ, 6 բավարարվել է • 8 ՇՄՋ միջոցառման ճանաչման հայտ, բավարարվել է 8 • 3 որակավորման հայտ պարզեցված կարգով, բավարարվել է 3
11 մարտի 2025թ.	N 5	Պալատի 2025թ. հունվար ամսվա քննաշրջանի որակավորման քննությունների բողոքարկված աշխատանքների վերստուգման արդյունքների հաստատում
17 մարտի 2025թ.	N 6	• 6 ազատման հայտ, բավարարվել են 5՝ 22 քննություն, 1 հայտը չի բավարարվել • 7 որակավորման հայտ, բավարարվել է 7, • 1 որակավորման հայտ պարզեցված կարգով, բավարարվել է 1 • 2 ՇՄՋ միջոցառման ճանաչման հայտ, բավարարվել է 2 • 2025թ. հունվար ամսվա որակավորման քննությունների բողոքարկման արդյունքների վիճարկման հետ կապված դիմումների քննարկում

		• Որակավորման հանձնաժողովի 2024թ. գործունեության հաշվետվության քննարկում
27 մարտի 2025թ.	N 7	• 4 ազատման հայտ, բավարարվել է 4՝ 21 քննություն, • 13 որակավորման հայտ, բավարարվել է 13 • 3 ՇՄՋ միջոցառման ճանաչման հայտ, բավարարվել է 3
10 ապրիլի 2025թ.	N 8	• 4 ազատման հայտ, բավարարվել է 4՝ 17 քննություն, • 11 որակավորման հայտ, բավարարվել է 11
02 մայիսի 2025թ.	N 9	• 7 ՇՄՋ միջոցառման ճանաչման հայտ, բավարարվել է 7 • 4 ազատման հայտ, 4 բավարարվել է՝ 18 քննություն • 3 որակավորման հայտ, բավարարվել է 3
22 մայիսի 2025թ.	N 10	• 7 ՇՄՋ միջոցառման ճանաչման հայտ, բավարարվել է 7 • 3 ազատման հայտ, 3 բավարարվել է՝ 15 քննություն • 2 որակավորման հայտ, բավարարվել է 2
25 հունիսի 2025թ.	N 11	• 12 ՇՄՋ միջոցառման ճանաչման հայտ, բավարարվել է 12 • 5 ազատման հայտ, 5 բավարարվել է՝ 25 քննություն • 4 որակավորման հայտ, բավարարվել է 4,
29 հուլիսի 2025թ.	N 12	• 5 որակավորման հայտ, բավարարվել է 4, մերժվել է 1 • 4 ազատման հայտ, 4 բավարարվել է՝ 17 քննություն • 2 որակավորման հայտ պարզեցված կարգով, բավարարվել է 2
08 օգոստոսի 2025թ.	N 13	• 6 ՇՄՋ միջոցառման ճանաչման հայտ, բավարարվել է 6 • 3 որակավորման հայտ, բավարարվել է 2, մերժվել է 1 • 5 ազատման հայտ, 5 բավարարվել է՝ 25 քննություն • Պալատի 2025թ. հուլիս ամսվա քննաշրջանի որակավորման քննությունների արդյունքների հաստատում հաստատում
02 սեպտեմբերի 2025թ.	N 14	• Պալատի 2025թ. հուլիսի քննաշրջանի որակավորման քննությունների բողոքարկված աշխատանքների վերստուգման արդյունքների հաստատումը
17 սեպտեմբերի 2025թ.	N 15	• 12 ՇՄՋ միջոցառման ճանաչման հայտ, բավարարվել է 12 • 11 որակավորման հայտ, բավարարվել է 11 • 2 ազատման հայտ, 2 բավարարվել է՝ 11 քննություն
18 սեպտեմբերի 2025թ.	N 16	• 2025թ. հուլիս ամսվա որակավորման քննությունների վերաբողոքարկման դիմումների քննարկում

25 սեպտեմբերի 2025թ.	N 17	• 1 ՇՄՋ միջոցառման ճանաչման հայտ, բավարարվել է 1 • 4 որակավորման հայտ, բավարարվել է 4 • 6 ազատման հայտ, 6 բավարարվել է՝ 22 քննություն • 2025թ. հուլիս ամսվա Որակավորման քննությունների վերաբողոքարկման դիմումի քննարկում
14 հոկտեմբերի 2025թ.	N 18	• 8 որակավորման հայտ, բավարարվել է 8 • 3 ազատման հայտ, 3 բավարարվել է՝ 15 • քննություն
21 հոկտեմբերի 2025թ.	N 19	• 9 որակավորման հայտ, բավարարվել է 9 • 3 ազատման հայտ, 3 բավարարվել է՝ 11 քննություն • 13 ՇՄՋ միջոցառման ճանաչման հայտ, բավարարվել է 12, 1-ը հետաձգվել օրակարգը ներկայացնելուց հետո • 1 Որակավորման հայտ պարզեցված կարգով, բավարարվել է 1
30 հոկտեմբերի 2025թ.	N 20	• 11 որակավորման հայտ, բավարարվել է 11 • 8 ազատման հայտ, 8 բավարարվել է՝ 28 քննություն • Որակավորման հանձնաժողովի 2026թ. գործունեության ծրագրի քննարկում
05 նոյեմբերի 2025	N 21	• 9 ՇՄՋ միջոցառման ճանաչման հայտ, բավարարվել է 9 • 2 որակավորման հայտ, բավարարվել է 2 • Որակավորման հանձնաժողովի 2026թ. գործունեության ծրագրի քննարկում • 2025թ. հուլիս ամսվա Որակավորման քննությունների վերաբողոքարկման դիմումի քննարկում
21 Նոյեմբեր 2025	N 22	• 10 ՇՄՋ միջոցառման ճանաչման հայտ, բավարարվել է 10 • 4 որակավորման հայտ, բավարարվել է 4 • 2025թ. հուլիս ամսվա Որակավորման քննությունների վերաբողոքարկման դիմումի քննարկում • 2 ազատման հայտ, 2 բավարարվել է՝ 3 քննություն • Այլ հարցերի շրջանակում դիտարկվել են ՇՄՋ-ի հետ կապված խոշոր քառյակի երկու ՀՀ ներկայացուցիչների՝ KPMG-ի և PWC-ի տնօրեններից ստացված դիմումները:
24 Դեկտեմբեր 2025	N 23	• 23 ՇՄՋ միջոցառման ճանաչման հայտ, բավարարվել է 22, 1 հայտ չի բավարարվել • 2 որակավորման հայտ, բավարարվել է 2 • 1 ազա**տ**ման հայտ, բավարարվել է 1՝ 2 քննություն • Այլ հարցեր

ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2025Թ. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ

h/h	Գործառույթ	Միջոցառում	Ժամկետներ	Կատարողական
1	Որակավորման գործընթացի կազմակերպում	Որակավորման համար ստացված դիմումների և դրանց կից փաստաթղթերի՝ Պալատի Կանոնադրության, Որակավորման կարգի, ինչպես նաև կիրառելի այլ իրավական ակտերի ու կանոնակարգերի պահանջներին համապատասխանության նախնական ուսումնասիրության արդյունքների քննարկում և դրանց հիման վրա Պալատի խորհրդին որակավորում տալու կամ մերժելու վերաբերյալ առաջարկությունների ներկայացում:	Պարբերաբար՝ դիմումի ստացումից հետո մեկամսյա ժամկետում	18 նիստ, 107 հայտ, 105 տալ, 2 մերժել և 7 հայտ պարզեցված կարգով
2	Որոշում կայացնել աուդիտորի և փորձագետ հաշվապահի որակավորման քննությունների ծրագրի որոշակի առարկաների քննություններից ազատման վերաբերյալ	Պալատի աուդիտորի և փորձագետ հաշվապահի որակավորման քննությունների ծրագրի որոշակի առարկաների քննություններից ազատումներ ստանալու մասին ստացված հայտերի, դրանց կից ներկայացված փաստաթղթերի և այլ համապատասխան տեղեկատվության՝ Պալատի Կանոնադրության, Ազատումների կարգի, ինչպես նաև կիրառելի այլ իրավական ակտերի ու կանոնակարգերի պահանջներին համապատասխանության նախնական ուսումնասիրության արդյունքների քննարկում և դրանց հիման վրա համապատասխան որոշման կայացում	Պարբերաբար՝ դիմումի ստացումից հետո 30 աշխատանքային օրյա ժամկետում	17 նիստ,68 հայտ,67 բավարարվել է՝ ազատել՝ 277 քննությունից, 1 հայտ մերժել

3	Որակավորման քննությունների նկատմամբ վերահսկողության իրականացում	• Առնվազն երկու քննության գործընթացին հանձնաժողովի անդամներից ներկայության ապահովում՝ գործընթացը դիտելու նպատակով:	Քննությունների ընթացքում	Կատարվել է:
		• Քննաշրջանի ավարտից հետո գործադիր մարմնի հետ քննությունների ընթացքի և արդյունքների քննարկում՝ սկսած քննաթերթիկների պատրաստումից մինչև ստուգում:	Քննությունների ընթացքում	Կատարվել է:
4	Մշակել աուդիտոր-ների և փորձագետ հաշվապահների որակավորման գործընթացի հետ կապված ներքին իրավական ակտերի նախագծերը և հետագայում դրանք արդիականացնել	• Ըստ անհրաժեշտության՝ գործող կարգերում փոփոխությունների նախագծերի մշակում	Ըստ անհրաժեշտության	
		• Որակավորման քննությունների ծրագրի վերանայում՝ ՀՄԴ կրթական ստանդարտների պահանջների ներքո և կատարվելիք աշխատանքների նախագծի կազմում	Հունվար-օգոստոս	Շարունակվել է աշխատանքը Քննությունների ծրագրի «2. Կառավարչական հաշվառում» և «5. Ֆինանսական կառավարում» առարկաների ծրագրի մանրամասն տարբերակի վրա:
5	Ուսումնասիրել կազ-մակերպությունների կողմից անցկացվող մասնագիտական	Ուսումնասիրել ՇՄՋ միջոցառումների կազ-մակերպիչներից և/կամ մասնակիցներից ստացված փաստաթղթերը՝ միջոցառումների վերաբերյալ իրականացման փորձի վերաբերյալ տեղեկանքներ,	Պարբերաբար՝ դիմումների/հայտերի ստացումից հետո 30	14 նիստ, 120 հայտ, 119 բավարարվել է, 1՝ ոչ

	դասընթացները և սեմինարները ու որոշում կայացնել դրանք որպես ՇՄՋ միջոցառում ճանաչելու վերաբերյալ	միջոցառումների ծրագիրը (ներառյալ՝ թեմաները, տևողությունը և ակնկալվող գիտելիքը և/կամ հմտությունը) և կայացնել համապատասխան որոշում	աշխատանքային օրյա ժամկետում	
6	Պալատի Խորհրդի հանձնարարականների կատարում	Միջոցառումներն ըստ անհրաժեշտության	Հունվար-դեկտեմբեր	Նախագահի հանձնարարությամբ կատարվել է բողոքարկված և վերստուգված աշխատանքի վերանայում
7	Հանձնաժողովի Կանոնադրությամբ սահմանված այլ գործառույթներ	Միջոցառումներն ըստ անհրաժեշտության (Հունվար-դեկտեմբեր)	• Պալատի 2025 թ. հունվար ամսվա քննաշրջանի որակավորման քննությունների արդյունքների հաստատում • Պալատի 2025 թ. հունվար ամսվա քննաշրջանի որակավորման քննությունների բողոքարկման արդյունքների հաստատում • Որակավորման հանձնաժողովի տարեկան /2026թ./ գործունեության ծրագրի մշակում • 2025 թ. հուլիսյան քննաշրջանի որակավորման քննությունների արդյունքների հաստատում	

			• 2025 թ. հուլիսյան քննաշրջանի որակավորման քննությունների բողոքարկումների արդյունքների հաստատում • Հանձնաժողովի որոշ անդամների կողմից կատարած մոնիթորինգային այցեր և դրանց վերաբերյալ հաշվետվություններ • Որակավորման հանձնաժողովի 2024թ. գործունեության հաշվետվության քննարկում

ՀԱՊ Որակավորման

Հանձնաժողովի նախագահ՝ **Արթուր Հարությունյան**